ինքը Վեհաժողովից յանձնարարութիւն ունի պաշտպանելու բոլոր հայերին, ուր և գտնուէն նրանք՝ Հայաստանում, Ադրբէջանում, Թիւրքիայում թէ Վրաստանում: Ջինւորական օգնութիւն առ այժմ չի կարող տալ, բայց արդէն փարիզ է ուղարկել 3 սպաներ՝ խնդրելով անմիջապէս զօրք հասցնել Հայաստան, այլ և խնդրել է, որ անգլիական զօրքերի մի մասը թողնւի Հայաստանում: Ինքը ամէն միջոց ձեռք կառնէ պաշտպանելու համար Հայաստանի սահմանները և կը պահանջէ, որ Ադրբէջանի կառավարութիւնը վերջ տայ գրգռիչ գործունէութեան Հայաստանի մահմեդականների մէջ: Ձեռք կառնէ նաև կարուկ միջոցներ, որ Հայաստանը ստանայ զէնք ու ռազմամթերք և որ վրաց կառավարութիւնը արգելք չլինի նրանց փոխադրութեան: Մասնաւորապէս, կաշխատէ ապահովել Հայաստանի պարենաւորման գործն ու մթերքի հայթայթումը: Դրա համար նա բաթումում թողել է իր սպաներից մէկին՝ Հայաստանի համար ստացուղ ապրանքները փոխադրելու համար: Շուտով բաթում կը հասնի 7000 թոն ալիւրով բեռնաւորւած մի նաւ, ապա կը ստացւեն պահածոներ, մսեղէն, դեղօրայք, երկրագործական գործիքներ ու մեքենաներ և այլն: Դրամական օժանդակութիւն Ամերիկան չի տայ, քանի հոգատարութեան հարցը որոշւած չէ, բայց ինքը յոյս ունի, որ Նպաստամատոյցը կը տրամադրէ մինչև 50 միլիոն դոլար: Ցոյս ունի նոյնպէս հայթայթել զօրքի, որբերի և գաղթականների հագնելիքը, այլ և բանակի համար 150 ջորիներ՝ իրենց սարքով միասին: Մինչև ձմեռ թիւրքահայերի ներգաղթը անհնար է, բայց զարնանից նրանք կարող են վերադառնալ իրենց տեղերը: Հայկական հարցի լուծումը Վեհաժողովում որև է կասկած չի յարուցանում. վճռւած–վերջացած խնդիր է. մնում է միայն որոշել սահմանները և հոգատար պետութիւնը:

Ցաջորդ օր, օգոստ. 22–ին Հասկելը ներկայ գտնւեց Մորհրդարանի նիստին, ուր նախագահող Ց. Ալրուէեանը ողջունեց նրան ջերմ խօսքերով: Հասկելը պատասխանեց հետևեալ ճառով.

«Ես հասկանում եմ, որ ձեզ բոլորիդ զբաղեցնում է երկրի ապահովութեան և դաչնակիցների օգնութեան հարցը: Գուցէ տարօրինակ թւայ, թէ ինչու այսքան երկար է ձգձգւում հայկական խնդրի լուծումը: Ամերիկացիները ընդհանրապէս ծանր են չարժւում: Մենք դանդաղ սկսեցինք պատերազմը, դանդաղ վարեցինք այն, բայց աւարտեցինք ամենայն թափով: Դանդաղ ենք չարժւում նաև հաշտութեան խնդրում: Մինչև որ չվաւերացւի հաշտութեան պայմանագիրը, չընդունւի Ազգերի Լիգան, չի՛ կարող լուծւել Հայաստանի մանդատի խնդիրը: Սակայն, այդ չի կարող բաւարարել ո՛չ ձեզ և ոչ ինձ: Հարկաւոր է այժմէն իսկ մտածել՝ ի՞նչպէս օգնել հայ ժողովրդին: Կասկած չկայ, որ մեզ անհրաժեշտ է զինւած ոյժ, ո՛չ թէ նրա համար, որ խլենք Վրաստանից կամ Ադրբէջանից նրանց պատկանող անվիճելի հողերը, այլ՝ ապահովելու համար հայ ժողովրդի գոյութիւնը: Մեզ հարկաւոր է զօրք պաշտպանելու համար այն ժամանակաւոր սահմանները, որոնք ցոյց են տրւած մեզ: Փարիզում դեռ ևս մանրամասնօրէն ծանօթացած չլինելով իրերի դրութեանը՝ ես անհրաժեշտ չէի համարում զինւորական ոյժի ներկայութիւնը Հայաստանում: Դրա համար ես իմ Հայաստան գալուն իբրև պայման դրի առ այժմ անգլիական զօրքերի թողնելը Հայաստանում, մինչև որ